

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է 75 րոպե

7-8-րդ դասարաններ


- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վատասկել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Բազմազավակ ընտանիքի հայրը ինքն է ընտրել իր 7 որդիների անունները՝ **Աշոտ, Ժիրայր, Դավիթ, Ազատ, Հակոբ, Անդրանիկ, Գանա**: Տղաների անուններից գուշակիր, թե ինչ է երեխաների պապի անունը:


- Ա. Աժդահակ Բ. Բաբկեն Գ. Գարեգին Դ. Դավիթ Ե. Եղիազար

2. Ի՞նչ բառ կստանանք՝ նկարների անվանումներից մեկական տառ համապատասխան վանդակում գրելով:



- Ա. կայծակ Բ. կաղամբ Գ. տաղանդ Դ. ամպրոպ Ե. ամրակ

3. Ի՞նչ բառ պետք է գրել մեղվիկի փոխարեն:

Այբբենարան, գզվանք, ընդդեմ, բզզալ, թթվաչ, , բալլաք

- Ա. կկվականչ Բ. ուղղել Գ. դժժալ Դ. խխունջ Ե. սովալլուկ

4. Ի՞նչ բառ է պատկերված **Թ Թ Թ** նկարելուկով:

- Ա. ութ Բ. որթ Գ. թերթ Դ. թիթեռ Ե. եռաթերթ

5. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում:

- Ա. ձայն ձայնի տալ
Բ. աչքերը գետնին գցել
Գ. կոտրած գոլափ նման մեջ ընկնել
Դ. կոտրած գրոշի արժեք չունենալ
Ե. աչքով աչք չունենալ



6. Պատասխանի տարբերակներում բերված բառազույգերից չորսը ինչ-որ օրինաչափությամբ կապված են իրար: Ո՞ր բառազույգը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

- Ա. կավ-կավե Բ. մոմ-մոմե Գ. քերծ-քերծե Դ. փայտ-փայտե Ե. քար-քարե

7. Եթե ջնջես աղյուսակում գրված այն տառերը, որոնք հանդիպում են չորսական անգամ, ապա մնացած տառերով ստացված բառը տարբերակներից ո՞րի հումանիշը կլինի:

- Ա. մրմունջ Բ. մարմաջ Գ. ուրու
Դ. էակ Ե. անուրջ

գ	ու	ա	գ	ն
ը	ց	ու	ի	ա
ա	ի	գ	ո	ու
ի	ք	մ	ա	մ
մ	գ	ու	մ	ի

8. **Մար, կար, հյուս, կաթ, երկ, պար, խեթ**: Քանի՞ նոր բառ կստանա Նարեկը, եթե տրված բառերում ավելացնի իր անվան առաջին տառը:

- Ա. հինգ Բ. վեց Գ. յոթ Դ. ութ Ե. ինը

9. Ամբողջացնել առածը. «Աշխատանքից հետո _____»:

- Ա. հացը մեղրից քաղցր է Բ. հանգստանալը կարևոր է
Գ. հաց ուտելը դժվար է Դ. քնելը հաճույք է Ե. հյուր գնալը ցանկալի է

10. **Ցոնտություն, ցպահանջ, ցայժմ, ցասում, ցայսօր** բառերից ո՞րը «չի սպասեցնում»:

- Ա. ցոնտություն Բ. ցպահանջ Գ. ցայժմ Դ. ցասում Ե. ցայսօր

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ո՞ր բառը տարբեր իմաստներ ունի ատամնաբույժի, մաթեմատիկոսի, լեզվաբանի, բուսաբանի համար:

- Ա. լեզու Բ. անտառ Գ. արմատ Դ. տոկոս Ե. կենդանի

12. Ի՞նչը կօգնի, որ իրականացվի նկարում պատկերվածը.



- Ա. քանոնը Բ. քառակուսին Գ. հումուսը Դ. անձրևը Ե. անիվը


13. Ի՞նչ նախադասություն է գրված:

Ծավովվերթ ծափուրումեն էրե կեննչսեգիմինիշսեչրեինինու:

- Ա. Ծովը այլեկոծվում է կեսօրին: Բ. Ծովը ծփում է երեկոյան:
Գ. Ծովը ծփում էր կեսգիշերին: Դ. Ծովում լողում էին կամավորները:
Ե. Ծովը հիացնում էր մեզ:

14. Պատասխանի տարբերակներում բերված ո՞ր տառերը տեղադրելով կետերի փոխարեն՝ կստանանք բառ (տե՛ս նկարը):

- Ա. **ս** և **կ** Բ. **բ** և **ն** Գ. **հ** և **ց** Դ. **ծ** և **հ** Ե. **խ** և **ծ**



15. **ԿԱՐԵՆԸ ՄԱՐԶԻՎԻ ԶԱՐՄԱՆՔԻՑ ՇՇՄԵՑ** նախադասության որոշ բառերում տառերն իրենց տեղերը փոխել են: Ի՞նչ նախադասություն կստացվի, երբ տառերը վերադառնան իրենց տեղերը:

- Ա. Կարենը մարզիկին զարմացրեց ու շշմեցրեց:
Բ. Կարենի զարմիկը մարզանքից շշմեց:
Գ. Նարեկը մարզպետին զարմացրեց շշմեցուցիչ մարզանքով:
Դ. Կարենի զարմիկը մարզպետ է:
Ե. Նարեկը զարմիկի մարզանքից շշմեց:

16. Ներկայացված տառակապակցություններում բաց են թողնված ձայնավորները: Բոլոր տարբերակներում, բացի մեկից, բառերից մեկը գույն է նշանակում, մյուսը՝ բույս: Ո՞ր տարբերակում է այդ օրինաչափությունը խախտվել:

- Ա. ՍՊՏԿ ՉՆԾՂԿ Բ. ԿՐՄՐ ՎՐԴ Գ. ԿՆՉ ՄՐԳԳՏՆ
 Դ. ԴՂՆ ԳՆՐԲԿ Ե. ԿՊՅՏ ՏՐՓԿ

17. Ո՞րն է հետևյալ ժողովրդական հանելուկի պատասխանը.

*Մի արտ ունենք, քաղեցինք,
 Խուրձ կապեցինք,
 Արտը վեր կացավ գնաց,
 Խուրձը մնաց:*

- Ա. ոչխարն ու բուրդը Բ. հնձվորն ու խոտը Գ. ծովն ու գետը
 Դ. ճանապարհն ու փոշին Ե. սարից գլորվող քարը

18. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

Ա. 6715	Բ. 5902	Գ. 3780	Դ. 4891	Ե. 5432	Ս Բ Ը Տ	
					+	
+	+	+	+	+	<u>Ո Ի Ղ Ե Ղ</u>	
<u>1636</u>	<u>3606</u>	<u>1404</u>	<u>2505</u>	<u>4161</u>	Ս Ա Ը Դ	
8351	9508	5184	7396	9593		

19. Տրված բառերից չորսն ունեն հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառն է այդ օրինաչափությունից գուրկ:

- Ա. չքնադագեղ Բ. սիրունաստես Գ. ծնկաչոք Դ. պերճաշուք Ե. լրջախոհ

20. Ո՞ր բառն է գաղտնագրված:

1¹ 10² 2³ 8¹ 7¹ 1³

- Ա. մատանի Բ. նարգիզ Գ. պատշար Դ. վարսակ Ե. մակույկ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. ԱՐԲՄԱՎԱՆՏԱՐ տառաշարքից, առանց տառերի դասավորությունը փոխելու, քանի՞ տարբեր նախադասություն կարելի է ստանալ:

- Ա. 2 Բ. 3 Գ. 4 Դ. 5 Ե. 6

22. Երամ, հարց, համար, ցեղ, մեղր, հրեա բառերը «բամվել են» ինչ-որ բառից: Ո՞րն է այդ բառը:

- Ա. համարիչ Բ. մեղրամոմ Գ. ցեղակից Դ. մեղրահաց Ե. հարմարանք


23. Խենթ կենվորը ձանձրույթից ձերմակ հիրիկներ շարեց չափազանց ջեռուցված սենյակում: Այս նախադասությունը կազմված է հետաքրքիր օրինաչափությամբ, որը վերաբերում է

- Ա. բառերի վանկերի քանակին
 Բ. բառերի բաղաձայնների քանակին
 Գ. տառերի անվանումներին
 Դ. տառերի թվային արժեքներին
 Ե. բառերի ձայնավորների քանակին

24. Բերված բառագույգերից չորսին հատուկ է շատ հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառագույգը այդ օրինաչափությանը չի ենթարկվում:

- Ա. քար-սեր Բ. դեր-սուր Գ. բար-կուռ Դ. սուտ-կաթ Ե. վազ-գես

25. Ի՞նչ բառ է գրված նկարելուկով:



- Ա. հավք Բ. հավանգ Գ. հավագին Դ. համերգ Ե. հավանել


26. Ո՞ր բառի հումանիշը չես գտնի **ՀՄԿՍՄԱՐՏԻԿ** բառում:

- Ա. դաշտ Բ. կոիվ Գ. ատամ Դ. կապոց Ե. ինքնաբերաբար

27. Մոխրոտիկն ունի տասներկու խեցի, որոնց վրա գրված է մեկական տառ: Այդ տառերն են՝ **թ, ա, փ, ի, դ, է, յ, բ, թ, ա, լ, ն**: Մոխրոտիկը քանի՞ խեցի պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

- Ա. 7 Բ. 8 Գ. 9 Դ. 10 Ե. 12

28. Բառերի ո՞ր եռյակը եթե լրացնենք քառակուսու մեջ, քառակուսու տողերով և սյուններով՝ վերևից ներքև, ներքևից վերև, աջից ձախ, ձախից աջ, կկարդանք բառեր:



- Ա. սագ, գիծ, ագի Բ. կկու, կոն, ունք Գ. սպա, պատ, արև
 Դ. թաս, սաթ, ամպ Ե. աղա, տաղ, դատ

29. **ՔԵՐԱԿԱՆ** բառից մեկ տառ հանելով՝ մնացած տառերով կազմել են նոր բառ: Ստացած նոր բառից հանել են ևս մեկ տառ և մնացած տառերով կազմել նոր բառ: Նույն կերպ շարունակելով՝ կազմել են ևս երեք նոր բառ: Ի՞նչ նոր բառ է կազմվում հանված տառերից:

- Ա. ԵՐԿԱՆԲ Բ. ՔԱՐ Գ. ՆԵՐԿԱ Դ. ԱՐՔԱ Ե. ՔԵՐԱՆ

30. Ակ՝նդես, ակ՝նթարթ, անակ՝նկալ, ան՝նդհատ, առ՝նթեր, առ՝նչվել, գույն՝զգույն, դաս՝նթաց, դաս՝նկեր, երկ՝նտրանք, ինքն՝ստիներքան, լուս՝նկա, խոչ՝նդոտ, կոր՝նթարդ, կոր՝նթաց, համ՝նկնել, հյուր՝նկալ, ձեռ՝նտու, ձեպ՝նթաց, մերթ՝նդմերթ, նոր՝նտիր, որոտ՝նդոտ, սր՝նթաց, ունկ՝նդիր բառերը բաժանվել են երկու բանակի՝ կախված այն բանից, թե *-ի փոխարեն ը գրվում է, թե ոչ: Տարբերակներում բերված ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ա. Բանակներում բառերի թվերը հավասար են:
 Բ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից մեծ է վեցով:
 Գ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից փոքր է հինգով:
 Դ. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից մեծ է յոթով:
 Ե. Բանակներից մեկում բառերի թիվը մյուսի բառերի թվից փոքր է ութով: